




ԲՈՐՈՅԸԿԱՆ, ՈՒՍՈՒՄՆԸԿԱՆ, ԸՐՈՒԵՍՏԳԻՏՈՒԿԱՆ

Ի Գ. ՅԱՐԻ 1910

Տարնկաճ 15 ֆր. ոսկի — 6 րբ.:
Վեցամսեայ՝ 8 ֆր. ոսկի — 3 րբ.:
Մեկ թիւ կ'արժէ 1-50 ֆր. — 70 կ.:

ԹԻՒ 7, ՅՈՒՐԻՍ

ՊՕՂՈՍ ՊԵՏՐՈՍ ԺԳ. ԹԵՐԶԵԱՆ

ԿԼՈՒՂԻԿՈՍ-ՊԵՏՐՈՍԻ ԸՆԴՈՒՄՆԵՐԻ ՏԱՆՆ ԿԻՆԻԿԻՈՅ



Եր. Պօղոս Սապաղեանի հրաժարմամբ կաթողիկոսական Աթոռէն, տարի մը գրեթէ՝ դատարկ մնաց կաթողիկոսական Աթոռը. ամէնուն ուշադրութիւնն այնուհետեւ ակնկալոյց ուղղուած էր նոր ընտրութեան: Ուրախարար էր աւետիբը, զոր կը նօթծէր հեռագիրն Կ. Պոլսէն — Գեղ. Պօղոս Խպ. Թերզեան Կաթողիկոս: Ապրիլ 23 էր այդ զուարթօրը, երբ նորընտիրն տառապանքի աշխարհին մէջ զգաղած էր արկածալից ժողովրդեան արտասուքն սրբելով . . . : Եւ Յունիս 26ին միայն կրցաւ տօնել կաթողիկէ Հայութիւնը Անոր կաթողիկոսական օծման հանդէսը Կ. Պոլիս:

Անկեղծ շնորհաւորութիւն ընդհանուր Կաթողիկէ Հայութեան:

Կաթողիկոսական Աթոռը կը քարծրանայ անձնաւորութիւն մը, որուն մեծութիւնն արտաքին շլացուցիչ տիտղոսներու չէ որ կապուած է, այլ անխոնջ վաստակի փայլուն արդեանք:

Նպատակ չունինք այս տեղ ներկայացընել նորընտիր Կաթողիկոսին փայլուն գործունէութեան քազմագոյն պատկերը, որ ծնշիչ տպաւորութեան տակ շատ հեռուններն պիտի ձգէր զմեզ, այլ պիտի քաւականանանք համառօտ զմերով միայն ծանօթացընել անոր կեանքը:

Թէրզեան ծնած է քարիպաշտ քնտանիքէ ի Կոտինա Փորք Ալիոյ՝ 1855, Օգոստոս 20ին: Ի քնէ աղիւտաբարոյ եւ ուշիմ՝ պատանին արդէն իսկ փորք հասակէն կը ցուցնէ յանձին գեղեցիկ քարմամսնութիւններ. ուսումնական առաջին շրջանը կը կատարէ տեղւոյն թաղական Դպրոցը (ընդ հոգաբարձութեամբ Գէորգ Վ. Զամբուրեանի եւ Ստեփան Վ. Համամլեանի)՝ համեմատաբար սուղ ժամանակի մէջ:

Էսաներեքամեայ (1878) կը գտնենք զինքը Հոռոմ՝ Ուրբանեան Վարժարանը, ուր յաջողութեամբ աւարտելով փիլիսոփայական եւ աստուածաբանական ընթացքը կը ծնունդորոյի քահանայ¹ եւ կը վերադառնայ Հայերենիք:

Թէրզեանի ընդհանուր նկարագրին վրայ կը փայլին յատկապէս անկեղծ կամք մը, անխնջ յարատեւութիւն եւ վարչական մեծ աշարջութիւն: Պերճախօս լեզուն զարդ է միայն այս քարմամսնութեանց վրայ: Ճոխ է նաեւ լեզուաց հմտութեամբ, րացի յայերէնէ եւ տաճկերէնէ՝ քաջ ծանօթ է նաեւ լատիներէնի, գաղղիերէնի եւ իտալերէնի. համառ շափով մը՝ անգղիերէնի եւ գերմաներէնի ալ:

Իր առարեւական գործունէութեան ասպարէզն կ'ըլլայ ի սկզբան Պրուսա, ուր իրբեւ օգնական ըմբռնան եպիսկոպոսի՝ կը վաստակի մեծ եռանդեամբ եւ քիչ ժամանակէն կը հանէ համբաւ մը, որ իր առջեւ աւելի լայն ասպարէզ մը կրնար բանալ:

Արդեամբք ալ, երբ 1892ին Ատանայի առաջնորդն Կարապետ Արքեպ. Ասլանեան Ազարեան Կաթողիկոսի աջակից եւ փոխանորդ կարգուեցաւ եւ այսու ստիպուեցաւ հեռանալ թեմէն, Ազարեան շփարանեցաւ իւր ուշադրութիւնը դարձնել թէրզեանի վրայ. եւ շէր վրիպած:

Նոյն տարին՝ արդէն կը ծնունդորոյի Թէրզեան եպիսկոպոս Ատանայի:

Նոր պաշտօնիս մէջ յատկապէս ցոյց պիտի տար Թէրզեան իւր հոգւոյն սեպհական կարողութիւնները: Եւ ստուգիւ նա երեւցուց իւր վրայ նոր ոյժ եւ նորանոր սեպհականութիւններ, որոնք յառաջ քերին Ատանայի թեմին մէջ քուրորդին նորակերպ յեղաշրջում մը, կառուցուեցան եկեղեցիներ, դպրոցներ . . . Բայց ինչո՞ւ թուել այս ամէն լուսամիտ գործերը, քանի որ անոնք այսօր ցաւոց եւ դառն կսկծի մահարձաններ միայն են: Ընդ միշտ անմոռանալի վայրագ մրրիկը մահճեղական մոլեռանդութեան՝ ամենայն ինչ խանձեց, սպականեց քաղմամբայ քրտանց արդիւնքը մոխիրնեքու տակ թաղելով . . .

Անճանալէր Հովիւը սակայն նաեւ խժժական տեսարանիս առջեւ չգիտցաւ վատութիւն. չըսաւ: Հացաւ ի հարկէ իւր հօտին հետ դժուակ հաբուածը, քայց արտասուքը աչքին ջանաց միանգամայն սրբել արտասուքը ժողովրդեան . . . որուն մանր նկարագրութիւնը դեռ ցայսօր կու տայ ամենօրեայ լրագրութիւնը իւր տխուր էջերուն մէջ:

Եւ կարեկից Հովիւը պիտի չըմտնուէր երբեք իւր վշտահար հօտէն, եթէ կռճման աստղը չառաջնորդէր զինքը այլուր, աւելի լայն ասպարէզ մը գործունէութեան, ուր աւելի արդիւնաբեր պիտի ըլլար իւր վաստակը:

Վստահ ենք թէ հայրապետական քարձը Աթոռիս վրայ պիտի չարունակէ Նորին Սրբութիւնն իւր անխնջ գործունէութիւնը աւելի ջերմագին եւ եռանդալից, եւ յանձին իւր քարձորութեան պիտի գտնէ Կաթողիկէութիւնը նոր ոյժ, նոր քարգաւառում եւ Հայութիւնը միութեան նոր զօր: Կը մտածենք այսու ակնկալութեամբ Գեոր. Տեառն երկար եւ յաջող տարիներ: